

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՄԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոչկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԻՍԻՆՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դատարան-
ները միայն կը հրատարակուին անորոշ-
ջովին կաւ ընտրուի:
Դրանցում տողը 20 սանթիմ. երե-
սեմ տեղի անգլաներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՈՒՂԻՂ ԴԱՏԵՆՔ

Զ.

Ազատ երկիրներու մէջ ապրող
հայ ժողովուրդին մեծամասնու-
թիւնը, եւնաֆը, համակիր կերե-
ւար յեղափոխական գոծունէու-
թեան. քիչ շատ դրամ ալ տուաւ
առանց իսկական լուրջ զոհողու-
թեանց տրամադրելու ըլլալու ու-
րոնք յեղափոխական գործին ջիւն
պիտի ըլլային, եթէ գոյութիւն ու-
նենային: Եւ ուրախ էր ժողովուր-
դը, որովհետեւ յոյս մը սկսեց էր
տածել հայաստանի ազատութիւն-
նը տեսնելու՝ զնուած անձնաւոր
երիտասարդներու արիւնով: Ինչ
հիմանաւ հեռավարներ: Քանի
մը ֆռանքի զոհողութեամբ կա-
րենալ օտարութենէ դառնալ ա-
զատ հայրենիքի ծոցը, այն տեղ
ազատ ապրելու և նիւթապէս
բարգաւաճ կեանքի մը ամէն ա-
ռաւելութիւնները վայելելու հա-
մար:

Կուզէիք և կուզենք որ հայաս-
տան փրկուի. սակայն այս ժո-
ղովրդային տենչը եսական բան
մը ունէր իր մէջ, և հետեւապէս
անընդունակ էր պղատոնական
արտայայտութիւններէ տարբեր
ձեւերով ներկայանալու: Զոհո-
ղութեան ոգին կը պակսէր բա-
ցարձակապէս այն չափով որ հա-
մեմատէր ազատութեան գործին
մեծութեան հետ:

Այս կը նշանակէ թէ ժողովուր-
դին ոչ-յեղափոխական տարրը չէր
հասած ինքնաճանաչութեան, ազ-
գային պարտականութեանց գի-
տակցութեան այն հասուն աստի-
ճանին առանց որուն յեղափոխու-
թիւնը ընդհանուր-ազգային, բուն
ժողովրդային հանգամանքէ զուրկ
և հետեւապէս միշտ տկար կը մը-
նայ:

Մենք ուզեցինք հնձել առանց
ցանկութեան: Ըսել չենք ուզեր թէ
եթէ ժողովուրդը նիւթական ծանր
զոհողութիւններու յանձնառու և
զած ըլլար, յեղափոխական ձեռ-
նարկները փայլուն յաջողութեամբ
պիտի պսակուէին: Ո՛չ, գուցէ
այդ պարագային մէջ ալ արտա-
քին աննպաստ հանգամանքներու

բերումովը գործին վախճանը ճիշդ
նոյն պիտի ըլլար ինչ որ այսօր
եղաւ: Սակայն խնդիրը սա թէ
այդ վախճանը գուշակելով չէ
որ մեր գրպաններուն լերանք շատ
գծուար կը բռնայինք, այլ բա-
ցակայութեան պատճառաւ այն
բարոյական հասունութեան ա-
ռանց որուն ժողովուրդ մը, ար-
տաքին, դիպածական նպաս-
տաւոր հանգամանքները մէկ կողմ
ձգելով, չի կրնար զինք կաշկան-
դող գերութեան շղթաները խոր-
տակելու ազատութեան գործը պար-
զել իր հայրենիքի հողին վրայ:
Հոս է մեր կարծիքով մեր յե-
ղափոխութեան ամէնէն վիրտուր
կողմը:

Է.

Ամիտփենք ինչ որ ցարդ ը-
սինք:

Մեր ձախորդութիւնները և
այսօրուան թշուառութիւնը դը-
խաւորապէս վերագրելի են եւ-
րոպական քաղաքականութեան,
զոր գուշակելու կարող չէինք,
ինչպէս այս մասին անկարող գըտ-
նուեցաւ նաեւ Յունաստան իր ե-
փուն պետական մարդիկներով և
արքայական գերդաստանով մը որ
Եւրոպայի գրեթէ բոլոր վիճապե-
տական ընտանիքներուն հետ ազ-
գականական և մարմական կա-
պեր, քաղաքականութեան դադու-
նիքներու թափանցելու դիւրու-
թիւն և թագակիր գլուխներու
վրայ ազդեցութիւն բանեցնելու
միջոցներ ունէր:

— Գործուած թերութիւններուն
պատասխանատուութեան մէջ ա-
մէնքս ալ մեր բաժինը ունինք, ու-
րովհետեւ շատ թեթեւ կերպով ըմ-
բռնեցինք մեծ գործ մը, որ կը
պահանջէր ամենալուրջ շրջահայե-
ցութիւն, ծայրայեղ արթնութիւն
և ընդհանուր ժողովրդային կապի-
կերպութիւն. մը՝ բարոյական և
նիւթական ընդարձակ ուժերու
վրայ կանգնած: Թեթեւամտու-
թիւնը յատուկ չիղաւ միայն յե-
ղափոխական երիտասարդութեան,
այլ և ամէնքս:

Մեզմէ իւրաքանչիւրը խորհե-
ցաւ թէ ազգին մէջ յեղափոխա-

կան մեծ ոյժ մը կայ, որուն ինք
միայն մասնակից չէ ու չմտածեց
թէ գուցէ ուրիշներն ալ իրեն պէս
կը խորհին: Այս իմաստով ազնիւ
յեղափոխականը այնքան պատուա-
խանաւոր է որքան ու է ոչ-յե-
ղափոխական հայը, երկուքն ալ
իւր նոյն ազգին գաւառներ կա-
րողացած չըլլալով եւանդի հաւա-
սար լրջախոհութիւն ցոյց տալ
ձեռնարկի մը մէջ, որ զգացում
և խելք կը պահանջէր հաւասա-
րապէս: Երկուքն ալ խաբուեցան
պոռոտախօսութիւններէ ու կար-
ծեցին թէ հայաստան պիտի փրկ-
ուի քանի մը ցոյցով ու ժողո-
վրդի մէկ փոքր մասին գրամական
փոքր զոհողութիւններով:

Յանցանքը ամէնքս է: Կա-
ցութեան բարձրութեան վրայ չի
գտնուեցանք:

— Եղափոխութեան գործին մէջ
երեւան եկած ամէն կարգի զեղ-
ծումները, դաւեր, աւաղակութիւն
և եղբայրասպանութիւն վերագրե-
լով իրենց հիգիւնակ վատագի դա-
սակարգին, այս միջոցին զանա-
զանելու ենք յեղափոխական երի-
տասարդութեան այն վեհագի մե-
ծամանութիւնը որ ամէն ինչ,
գիրք, ինչք, ընտանիք և կեանք
վտանգեց հայրենիքի սիրտին. մա-
քառեցաւ, հալածուեցաւ, տան-
ջուեցաւ իր մտադրարին համար
ու ինկաւ դաշտին վրայ:

Խոնկ և պատիւ իր յիշատա-
կին:

ՎԵՐՋ

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Չիկայ թերեւս բառ մը որ այնքան
սխալ ըմբռնուած ու չարաչար գոր-
ծածուած ըլլայ, որքան «միութիւն»
բառը՝ վերջին երկու երեք տարիներուն
մէջ: Միութիւն կը պօսան ամէն
կողմէ, թերթներու և ժողովներու, ա-
տենախօսութիւններու և ուրիշ ամէն
պատեհ ու անպատեհ առիթներու մէջ:

Ու շատ քիչեր խորձ են թէ ո՛վ
եւ ի՛նչ են անոնք, այն տարրերը ո-
րոնք պիտի միանան և թէ անոնց
միացումն ի՛նչ արդիւնք կրնայ յա-
ռաջ գալ:

Միութեան գաղափարին վերացա-
կան հրապարակներէն յալիւսակուած ի-
րականութիւնը, կեցած հանգամանք-
ները մոռցած, շատ ալ ուշադրութիւն

չենք տար սա ճշմարտութեան թէ մի-
ութիւն և համերաշխութիւն պէտք է
որ նախ գոյանան միտքերու, տեսա-
կերպերու և ոկգրունքներու մէջ, որ-
պէս զի կարենան անկէ անցնել ու
մարմնանալ կազմակերպութեան մը ձե-
ւին տակ եւ տալ իրական օգուտներ:

Ենթադրելով իսկ որ մեր յեղափո-
խական կուսակցութիւնները որոշեն ի-
րենց մէջէն դուրս վանել այն աղտոտ
տարրերը որոնց գործակցութիւնը ա-
պականութիւն և զեղծում միայն սրփ-
ոց իր չորս դին, ատով անշուշտ փա-
փագելի համերաշխութեան մը ար-
գելներէն մին բարձուած կըլլայ. բայց
այդ բաւական չէ տակաւին: Բաւական
չէ նոյն իսկ միանալու լոկ անկեղծ փա-
փագը, երբ իրարու տրամագծապէս
հակառակ սկզբունքներով տողորուած
ուղիղներ և միաքի հակասական ուղ-
ղութիւններ անվրէպ իր սաղմին մէջ
պիտի խղզեն այդ փափագը:

Երբ մէկերնիս անկեղծօրէն կը հա-
ւատայ թէ՛ օրինակ, հայկական եկե-
ղեցին մեր ազգային փրկութեան մէկ
խարխիւր եղած է ցարդ եւ պիտի ըլ-
լայ միշտ, ուրիշ մը համոզուած է թէ
կրօնական և եկեղեցական սկզբունք-
ներն ու գաղափարները մէկ կողմ ձը-
գելով եւ փոսած այդ նախապաշարումնե-
րու սեղմող կապերէն փրկուած ազատ
միաքով ու անկրօն զգացումներով է
որ պիտի փրկուինք:

Մին կը կարծէ թէ ազգային աւան-
դութիւնները, հինին յարումը մեր գո-
յութեան և փրկութեան հաստատուն
մէկ կուտանք պէտք է նկատել, մինչ
ուրիշը եւրոպական ազատախօսութեան
ծայրայեղ արտադրութեանց իւրացու-
մին մէջ միայն կը տեսնէ հայաստանի
փառաւոր ապագան:

Մէկ կողմէ կարգապահութիւնը, ազգ-
գործերու համար սահմանուած կարգ ու
կանոններու յարգանքը եւ օրինաւո-
րութիւնը կը հուշակուին իբր փրկարար
ուղի, միւս կողմէն՝ ճիշդ ատոր հա-
կառակ ուղղութիւնը, խաւարամիտ
ժամանակներու մէջ հաստատուած սար-
քերուն եւ օրէնքներուն դէմ ըմբոս-
տութիւնը, ազգային ներքին գործե-
րու նկատմամբ անխիղճ անարական խլըր-
տումները, եւ ընկերակցական գաղա-
փարներու տարածումը ցոյց կը տուին
իբր արմատական դարման ամէն չա-
րիքներու որոնց ներքեւ կը հեծնենք:

Այս օրինակները կը բաւեն երեւան
հանելու գաղափարներու այն քառորդ
որուն խառնաշփոթութեան մէջ մոլո-
րած՝ անկարող դարձանք զիրար հաս-
կընալու:

Անհասկացողութիւնը բնականաբար
հետզհետէ հակառակութեան և թըշ-
նամութեան հանգամանք կառնէ, կիր-
քերը կը բորբոքին ու կուգայ վայր-
եան մը ուր կը մոռնանք թէ ամէն-

քիս բուն նպատակը նոյնն է եւ միջոցներու ընտրութեան մէջ իրարմէ կը տարբերինք : Նպատակը կը թողունք, որուն տեղ կանցնին միջոցները եւ ասոնց համար կը կոտինք իրարու դէմ :

Տակնուկրայութիւն մըն է կերթայ, երթալով կը սաստկանայ ու ոչ ոք կըրնայ տեսնել ասոր մէկ ծայրը, մէկ եւջը :

Իրերու այս վիճակին մէջ կրնա՞նք զարմանալ որ հայ յեղափոխութեան մէջ ալ մտաւ անհասկացողութիւնը, միտքերու խռնաշփոթութիւնը, պայքարը եւ թշնամութիւնը : Ոչ միայն զարմանալի չէ այս, այլ եւ այսպէս չեն ասոր համար միայն յեղափոխականները : Այն միջավայրը ուր կրթութեամբ, սնած ու մեծցած էին, անհամաձայնութեան տարրերով օժտուած դուրս հանեց զանոնք իր ծոցէն : Նոյն խմորէն էին անոնք ալ, ինչպէս ոչ—յեղափոխականները :

Ազգային գործերու մէջ խորհելու եւ գտնելու ընդհանուր ուղղութիւն մը որ մայրական կաթին եւ դպրոցական կրթութեան հետ ընդունելու է—ինք, պակսեցաւ մեզ : Եւ ցորչափ այս պակասը լրացնելու միջոցները չխորհինք ու չգործադրենք, ցորչափ ձեռնառնեցու միծրինակ հոսանք մը չընթանայ հայ ժողովրդին մէջ մէկ ծայրէն միւր, ցորչափ անական ու դժգոհական դատարարականութիւնը դադարեալ միտքի ստեղծել չի ջանայ, համերաշխութեան ոգին չպիտի կրնայ հաստատուն հիմքուր վրայ կոթնած անարգել վարել մեր յեղափոխական ինչպէս եւ ուրիշ ամէն գործերը :

ԱՌՕՐԵԱՅ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆԵՐ

ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐԳՈՂ

Եթէ ուշացայ այս անգամ, յանցանքն իմն չէ՝ այլ սա բարեմիտ ընկերվարականներուս որ, հակառակ ամենուստ արտայայտուած ջերմեանդ փափաքնեալու, տակաւին կարող չեղան, գէթ աղգային ժողովներու մէջ, ընդունել տալու իրենց աշխարհաքաղաքացի ծրարագիրը որ՝ տիեզերական խաղաղութեան հետ իմ ալ հանգիստս պիտի ապահովէր եւ միջոց պիտի տար ինձ աւելի յաճախ թղթակցելու քեզ հետ :

Անթիքա՛լ Եւրոպա... Որքա՛ն ալ խորամանկ է եւ հեռատես : Անպիտանը զգաց որ վաճառականութեան մէջ Հայերը վտանգաւոր մրցակիցներ ըլլալէ վերջ՝ ոչ նուազ վտանգաւոր ակոյեաններ պիտի ըլլան նաեւ իր օրհնեալ եւ բարեպաշտ դասակներուն, առեւտուրի արդի ամենէն կարեւոր եւ բանուկ ճիւղերէն մէկ քանիին մէջ, ինչպէս ընկերվարականութեան, անխոհեմ ազատամտութեան—չըսելու համար գայթակղեցնող անկրօնութեան—եւ հասարակական կենցաղ... :

Ահա ինչու համար այդ զգայուն եւ փափկանկատ Եւրոպայի «որ ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զգառնալ նորա ի չար ճանապարհէն եւ զկեանքն» թողուց որ բնաջինջ ընելու եղնեմ այնպիսի երկիւղալի մրցակիցներ որ կը համարձակէին, կը լսե՞ս, կը համարձակէին, օղային ծրագիրներ սարքել իրենց երազներուն, իրենց երեւակայութեան մէջ կազմակերպուած հայրենիքի մը համար, առանց գէթ միանգամ ժողովրդեան կամքն ու կարծիքը հարցնելու ազնուութիւնն ունենալու, վասն զի՝ որչափ գիտեմ, այդ տեսակ յախուռն ծրագիրներու գործադրութիւնը մեծամասնութեամբ պէտք է որոշուի :

Եւ հիմա, սիրելի ընթերցող, ներքէ՛ որ քեզ հարցնեմք— Ո՞ր է յանցաւորը Եւրոպա՞ն՝ որ այնքան յամառութեամբ պաշտպանեց իր առեւտրական շահերը, իր արտաճելի բերքերը... թէ մե՞ք որ թեթեւամտօրէն նեղուկեցանք անհաւասար կռուի մը մէջ, մեր գոյութիւնը վտանգելով :

Դաւաճան Եւրոպայի հանդէպ որքան ալ ասպետական ըլլային մեր ըզզացումներն ու մեր ընթացքը, պէտք է գիտնալ տակայն թէ 19րդ դարու վերջին քառորդին մէջ, հարիւրաւոր տարիներէ ի վեր ճնշուած, սուրբ կուրծեան վարժուած ժողովուրդ մը աշխարհի պատմութեան մէջ անմահ ու պաշտելի հերոսներու արիւնովը չէ՛ որ պիտի գտնէր իր փրկութիւնը : Մեր յեղափոխութիւնը վիժեց ու պիտի վիժէ տակաւին— նոյն իսկ առանց արտաքին արգելքներու—ցորչափ Հայաստանի գիւղացին իր զրացի Գիւրաթին ծախէ ինքնապաշտպանութեան համար իրեն տրուած հրացանը : Եւ գիւղացին ուսման, կրթութեան պէտք ունի հոգեկան այդ տխուր վիճակէն դուրս ելնելու համար :

Փորձեցի՞ք այս ուղղութիւնը : Այո, եւ գործի կէտը զրեթէ կատարուած էր, չօշափելի արդիւնքներ ձեռք բերուած էին, երբ մեր միջավայրին անընտել ձեռքեր, անփորձ ու փառասէր գլուխներ եկան խանգարել լուռ ու մուռ զործունէութիւն մը որ ասկայն իր լուրթեան մէջ աւելի լուրջ մտահոգութիւններ պատճառեց օտմ. կառավարութեան, աւելի յաճախ խռովեց Սուլթան Համիտի քունը քան մեր ուսմանը պայթումը եւ մեր զոհերուն անէծքն ու վայնասունը :

ԹՂԹԱԿԻՑ

ՎԵ՛Ն. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ Ի ԲԱԳՈՒ

Ս. Հայրապետը Բագուի մէջ թէ կառավարութեան և թէ ժողովուրդի կողմէ նոյն յարգալիք և համակրական ընդունելութիւնը գտաւ ինչպէս ի թիֆլիս : Պղատո՛ւ, նախնա՛նք եւ անհոգն ցոյցերէն վատ, Բագուցիները իրենց յարգանքն ու սէրը յայտնած են ամէնէն զբրական և շօշափելի կերպով, դրամական նուէրներով :

Այս մասին Շոթ Դաթի մէջ կը կարդանք.

ԲԱԳՈՒԻԺ... Պ. Կարապետ Լալայեանի տանը ի պատիւ Վե՛ն. Կաթողիկոսի տեղի ունեցած հացկերոյթից յետոյ, տան տիրոջ աղջիկը՝ օր. Լալայեանը ծնկաչոք համբուրում է Վե՛նա փառի աջ խնդրելով Նորին Օծութեան օրհնութիւնը. օրհորդը մատուցանում է Վե՛նին մի փոքրիկ արկղ հինգ հազար ռուբլի բովանդակութեամբ : Սեղանի վրայ Վե՛նափառը բարեհաճում է հրամայել արժ. Երիցեան ծայրագոյն վարդապետին հողոց ասել Լալայեանների ննջեցեալների յիշատակին : Երիցեան արժ. վարդապետը կատարում է Վե՛նի հրամանը, բայց հէնց որ ուզում է բաժակը բարձրացնել, Վե՛նափառը ընդմիջում է թէ՛նդու հանգստեան բաժակը չի կարելի խմել : Վե՛նափառը դառնում է գէպի տանտէրը. Կարապետ աղա, մինչեւ որ չխոստանաս Երուսաղէմ ունա գնալու, բաժակը ոչ ոք չի խմիլ : Կարապետ աղան վեր է կենում տեղից եւ գլուխը խոնարհում. « Եթէ կենդանի մնացի, Վե՛նափառ Տէր, խոստանում եմ այս տարի Երուսաղէմ ունա գնալ : »

—Հարուստներից անցնենք շատ չընչին միջոց ունեցողներին :

Մի հին, շատ հին Բագուցի, որի պապը գաղթել է Կալիֆայից՝ Լուդովիկ Սերգէեան, երկու հազար ռուբլի մատուց Վե՛նին Երուսաղէմի համար : Այդ պարոնը վեց հազար ռուբլի է նուիրում Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին : Արժ. Երիցեան վարդապետ, ստացուած երկու հազարով Երուսաղէմու հայոց պատկանեալ գնանի վրայ կրպակներ կանգնեցնելու պէտք է ձեռնարկէ : Մնացած չորս հազարը Պ. Սերգէեան խոստանում է շուտով ուղարկելու Կրպակների եկամուտը Ս. Յակոբայ վանքի օգտին է :

Այսպէս մի ըստ ինքեան չնչին միջոցների տէր հայ մարդ բարի գործի համար վեց հազար է նուիրում :

—Մեզ հաղորդում են Բագուից, որ Վե՛նա ընկերութիւնը Բիրի-Հէյբաթում Վե՛ն. Կաթողիկոսին նուիրել է 25,000 ռ., որից 15,000 Վե՛նի տըրամագրութեան տակ է գրուած, 5000ը Մարգարիական ընկերութեան եւ 5000ը նահանգապետին :

—Վե՛նափառ Հայրապետի Բալխանի այցելած ժամանակ, հայ նաւթարդի նաւերոյնները, ինչպէս գրում են մեզ Բագուից, որոնք են աչդ օրուայ նաւթի արդիւնքը յատկացնել Նորին Վե՛նափառութեանը : Իսկ Պ. Առաքել Դատուտեանը նուիրում է փետրուարի 9—15ի արդիւնքը, որ կըստացուի այդ ժամանակամիջոցում դուրս բխած նաւթից : Այս բանը կրկնուելու է ամենայն տարի : Պ. Միքայէլ Արամեանը եւ Պ. Համբարձում Մելիքեանը յատկացնում են մի օրուայ արդիւնքը : Երեւի միւսներն էլ կը հետեւեն վերոյիշեալների օրինակին :

—Ասում են, որ Վե՛ն. Հայրապետն մօտ 60000 ռ. է արվում իբրեւ աջահամբոյր :

—Բագուից մեզ գրում են որ Վե՛նափառ Հայրապետն այցելել է Նորէլի գործարանը : Փառաւոր ընդունելութիւնից յետոյ, եղբ. Նոբէյները Հայրապետին նուիրել են մի շքեղ եւ մեծարժէք ոսկէ զօծ արկղ՝ գործարանի պատկերներով ամփոփուած եւ Վե՛նի անուան մակագրութեամբ : Ընդունելութեան համար ծախք եղել է մօտ 3000 ռուբլի :

ՍԻՐԵԼԻ ՅԻՇԱՏԱՆԻ ՄԸ

Այսօր ճիշդ երկու տարի է որ աղետալի հրդհ մը վառնայի մանչերու վարժարանը մոխրակոյտի մը վերածեց, որուն ներքեւ թաղուեցան հանրութեան սիրելի դարձած եկեղեցականի մը, կատաղի բացերու մէջ կենդանի այրած աղետալ զոհի մը, Մկերտիչ վարդապետ Տէրունեանի նըշխարները :

Մի՞ծ գոհութեամբ կը ծանուցանենք թէ որոշուած է վաղը կիր. ժամերգութեանց աւարտումէն ետքը հոգեհանգիստի պաշտօն կատարել բարեյիշատակ հանգուցեալն գերեզմանին վրայ, և կը լսենք թէ իր յիշատակին ձօնուած բանաստեղծութիւններ ալ պիտի գան տխուր տարուրդութեան հանգիստութիւնը աւելցնել :

Տարակոյս չունինք թէ, վառնայի բոլոր մեր աղգակիցները պիտի վաւթան ներկայ ըլլալ սըրտաշարժ հանգէսին և իրենց յա-

գանքը մատուցանել յիշատակին այն մարդուն որ իր ազգ. պարտականութեանց գործադրութեան մէջ զոհ տուաւ իր վառվառն երիտասարդութիւնը և այն սիրական յոյսերը, որք հեռուէն կը ժպտէին իրեն, փայլուն ապագայի մը խոստումով :

Վերականգնուած վարժարանին շէնքէն անբաժան է նախկին կաթ. այցելու հովիւին յիշատակը : Մինչեւ իսկ մոսածոդներ եղան որ նուրակերտ գեղեցիկ շէնքին « Տէրունեան » անունը տրուի : Սակայն ատկէ աւելի տարրական պարտականութիւն մը ունի կատարելի վառնայի հայրութիւնը : Այլ ժամանակ է որ վայելուչ գերեզմանաքար մըն ալ զետեղուի այն հողակոյտին վրայ, որ կը պարփակէ այնքան սիրելի յիշատակ մը :

ՀԱՅԵՐՆ ՅԱՄԵՐԻԿԱ

Մեր ամերիկայեան աղգակիցներու մէջ սկսած աղգաշահ շարժումները կը շարունակուին եւ կը խոստանան շատ արդիւնաւոր ըլլալ : Ամէն տեղ ուր 8—10 հայ կը գտնուի, գոնէ ընթերցարան մը ունենալու համար ընկերութիւն մը կը կազմուի : Ի պատիւ իրենց պէտք է յիշատակել որ հայ որբերուն օգնելու հոգածութիւնը առաջնակարգ տեղ մը կը գրաւէ իրենց ջանքերուն մէջ, « Եթ. նեակ » ներքը որոնց իւրաքանչիւր անգամը պարտական է օրը մէկ սէնթ (5 ոսնթիւ) վճարել որբի մը ի նպաստ, տակաւ շատնալու վրայ են : Տարբեր նպատակներով կազմուած ընկերութիւններ իրենց եկամուտին կամ պատրաստ դրամին մէկ մասը կը յատկացնեն որբերուն : Այս գործունէութեան ջատագով կը կանգնի Տիգրիս, որ կը յորդօրէ կրթական ընկերութիւնները՝ իրենց՝ մօտ 10,000 տօլար պատրաստ դրամը զրկել Հայաստանի որբերուն, որովհետեւ ան ալ մանուկները որոնց համար ապագային մէջ այդ դրամով վարժարաններ պիտի բացուին, այսօր անօթութեան և մերկութեանէ ոչնչանալու վտանգին մէջ են :

Յիշատակութեան առժանի է որ Ամերիկայի երկու հոգեւոր հովիւներ, Տ. Մաշկոյց և Տ. Վաղինակ վարդապետներ, իրենց կոչումին համապատասխան անձնութեամբ կը ջանան իրենց հօտը ոգեւորել այս գործունէութեան մէջ ու բողոքական հայ քաղաքիչներ անոնց աջակից ու գործակից կը գտնուին : Օրիորդ Պաքուի, հայ բանաստեղծութեան սիրահար այն Ամերիկահին որ Քամա—Քալիպայի, Պէլիքիթալեանի, Դուրեանի և ուրիշներու բազմաթիւ կտորները մեծ յաջողութեամբ անգլիերէնի վերածեց, հասած տեղը կաշակցի ամերիկայեան Հայերու ջանքերուն խօս-

քով, գործով և դրամով: Այս գործունէութիւնը արտադրող ժողովրդային եռանդին վրայ դադարաւոր մը տալու համար աւելցնենք թէ Տիգրիս շաքաթաթիւնը մէկ թիւին մէջ միայն հրատարակուած կը տեսնենք 8—10 գումարումներ, հանդէսներ և «եօթնեակ» ներու կազմութիւններ:

Մաղթենք յարատեւութիւն մեր սիրելի աղագիւններուն:

ՀԱՅՏԵՐԷՆ ԶԱՅՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հանդէս Անսորեայի մէջ կը կարգանք:

Հայերէն դասախօսութիւնի Պարիս: Բազմապէս (թիւ 2) առանձնական նամակէ մը առեալ կը հրատարակէ հետեւեալը. «... Իմ աշակերտած վարժարանիս մէջ «Էջօլ տէ Հօթ-գ' Էքիստ» Պ. Մէյլէ սկսած է (նոր տարիէն ի վեր) հայերէնի Զայնաբանութեան դասեր (Յօճիքից արմէնիէն): Օրինաւոր աշակերտներն չորս են թուով. — պր. Հ. Սեփուհեան (հայ), պր. Մակս Նիգեթման (Զուիցերիացի) աշակերտ պր. Վազիրնազելի, Օր. Զերնիցի (ռուս օրիորդ) և պր. Գալտիէ (Յրանսացի): — Արդէն երկու դաս տուա և շատ հիշատակ կերպով: Այսու Պարիսի մէջ հայերէն լեզուի դասախօսութիւն կունենանք երկու տեղ, մին այս պր. Մէյլէ և միւսն Կարիէ: Ի վարժարանի Արեւելեան կենդանի լեզուաց: »

ԸՆԴԴԻՄԱՍՈՍՈՒԹԻՒՆ

Սեր ֆ. Պօլսոյ թղթակիցը դրական է մեզ հետեւեալ գրութիւնը, որուն հրատարակութիւնը քիչ մը ուշացաւ տեղի անձկութեան պատճառով: Լուրջ վիճաբանութիւնը, նախատինքն և հայհոյութենէ զերծ բանակութիւնը այնքան հազուադէպ բաներ են հիմայ՝ որ մենք իբր անկողնակալ՝ սիրով կընդունինք այսօրինակ ընդդիմախօսութիւնները որոնցմէ կրնանք լսել մը ըստ պատել կարեւոր խնդիրներու մասին:

Տ. Արմաւիր Մուրադեան Պուրկազէն կը պատասխանէ մեզ (') թէ Հայ յեղափոխական միութիւնը կազմողները անգործ Հայեր չ'են, այլ թէ զըզուած ըլլալով ներկայ յեղափոխական կազմակերպութեանց խաղերէն, որոշած են դրամ հաւաքել Իրենձ մէջ և պահել զայն մինչեւ որ բարձրագոյն հեղինակութիւն մը գալ կառավարել ազգային յեղափոխութիւնը, թէ իրենք պառակտումներ յառաջ բերած չեն ազգին մէջ: Շատ ուրախ ենք որ այս մեծ գործը յաջողուի անգործ մարդեր չեն: Բայց կը զարմանանք թէ ինչ տեսակ գործունէայ մարդեր են որ ընկալագիրքեր տպել տալու համար երկու հոգիով ֆ. Պօլսոյ կողմէն և հետաքրքիր էինք իմանալ թէ ո՞վ հայթայթած է իրենց ծախքերը: Եթէ իրաւ իրենց մէջ հաւաքումներ կատարէին, մենք իբր թղթակից իրաւունք չունէինք իրենց ներքին գործերուն:

(') Տես ԻՐԱՅԻՆՈՒՆՔԻ երկրորդ քիւր.

խառնուելու: Բայց այնպէս չէ. թէ Հասգիւղի մէջ և թէ կայարանները դրամ հաւաքած են ինչ՞ը՞ գաւառացիներէ: Մենք նորէն կ'զգուշացնենք մեր Հայաստանի եղբայրներէ: Միութեան սիրելի անու՝ ըստպատան տանելով նոր կուսակցութիւն մը կազմելու այս ջանքերուն մենք բոլորովին հակառակ ենք թէ և հոգիով մարմինով միութեան կան ենք և պիտի մնանք: Մենք կը ջանանք ներկայ կազմակերպութեանց թիւը պակսեցնել, դուք կախատիք գայն աւելցնել: Կը բողբոջէք թէ պառակտումներ յառաջ չը բերիք ազգին մէջ: Ուրիշն որո՞նք էին Պուրկազի Հայութեան պատիւ բերող և մանաւաճապ ընթացող պարտքը քայքայողները: Որո՞նք էին եկեղեցիին մէջ կուր յաբուցանողները և լրագրիներու սուտ տեղեկութիւնները զրկողները: Որո՞նք էին հինգ անմիջ Հայերու աքսորումը պատճառ եղողները: Վերջապէս որո՞նք էին Տ. Սահակ բանիրուն քահանային հետապնդման պատճառ եղողները: Ձեզ համար ընկերային դատարանի հարկ չը կայ: Մէկ երկու ամիս առ և պիտի զաղրի ձեր դոյութիւնը՝ ասպարէզ բանալու համար ուրիշներու: Փ. Պօլսինն է կարգը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենամարտի մոլութիւնը, Եւրոպայի միջնադարեան բարբարոս բարքերու այս ողբալի մնացորդը, իտալիոյ մէջ նշանաւոր մարդու մը կենանքը խնց:

Լրագրական բանակուտի մը հետեւանք երկու երեսփոխաններ, Գալալօթի և Մաքսիմանարտեցան: Գալալօթի գլխին ռէվօլվերի հարեւած մը ընդունելով մեռաւ անմիջապէս: Իտալիոյ երեսփոխանական ժողովը իբր սուգի նշան որոշեց ընդհատել իր նոյն օրուան նիստը, պըսակ մը դնել հանգուցեալին գեղեցիկներին վրայ և իր ցաւակցութիւնը յայտնել այն ընտրական շրջանակին, զոր Գալալօթի և կը ներկայացնէր:

Հոգով մէջ մեծ չքով կատարուեցաւ Սահմանադրութեան յիսնամեակի տօնը: Արքայական գերդաստանը, պաշտօնական բոլոր շրջանակները և ժողովրդի ամէն դասակարգերը մեծ խանդով մասնակցեցան փառաւոր հանգէսներուն: Միայն ընկերվարականները բողբոջեցին տօնին դէմ, առարկելով թէ այդքան ոգեւորութիւն անտեղի է քանի որ Սահմանադրութիւնը խոշոր թերութիւններ ունի և անոր տրամադրութիւնները միշտ չեն յարգուիր: Ընկերվարականները կը պահանջեն Սահմանադրութեան վերաբընութիւնը: Իրենց մէկ գումարումը արգիլուեցաւ օստիկանութեան կողմէն:

Տրալֆու-Լաթէրհալի-Զօլա գետը վերջացաւ, բայց անոր առաջ բերած յուզումին հետեւանքները կը շարունակուին: Մենամարտներ իրարու կը յաջորդեն: Հանրի և Բիքառ փոխ-գնդապետները, Օրօնի անօրէնին փաստա-

րան ժողով քննմանս և Լիւրի Քառօլի խմբագիր Լուուար Տրուան, հրամանատար Լաթէրհալի և Բիքառ զարնուեցան կամ պիտի զարնուին իրարու հետ: Բարեբաղդարար կենքի կորուստ չեկայ ցարգ: Սակայն մենամարտներէն և տաք վիճաբանութիւններէն աւելի հանրային ուշադրութիւնը գրաւած է ինքնասպանութեան դէպք մը որ տեղի ունեցաւ հետեւեալ պարագաներու մէջ:

Ռօպէրթի անուն երիտասարդ մը կը ծանօթանայ օր. Լէոնիթի հետ, որուն ինքզինք կը ներկայացնէ իբր վաճառատան մը ներկայացուցիչ: Երկուստեք կը համաձայնին իրարու հետ կենակցել: Սակայն օրիորդին աչքին կը զարնէ իր սիրահարին ապրելու եղանակը, որովհետեւ Ռօպէրթի քիչ անգամ դուրս կ'իջնէր, և այն ալ գիշեր ժամանակ, ինչ որ առեւտրական գործակատարի մը չէր յարմարեր: Երբեմն ալ 24 ժամ տունէն բացակայ կըլլար, առանց պատճառը օրիորդին յայտնելու: Տնական ծախքերու հարկաւոր դըրամը կուտար իր սիրուհիին, որ սակայն չէր կրցած, հակառակ իր հետաքրքրութեան՝ իմանալ թէ ինչ աղբիւրէ կուգար դրամը:

Օր մը Լէոնիթին չուկայէն տուն դառնալով Ռօպէրթին կ'ախառնէ կը գտնէ իրենց ննջացնեալին մէջ: սարսափած կը վազէ լուր տալու օստիկանութեան, որուն ներկայացուցիչը ինքնասպանութիւնը հաստատելէ վերջը, խուզարկութիւն մը կ'ընէ և կը գտնէ ինքնասպանին թղթերը: Ասոնց մէջ կը գտնուին նամակ մը և այցեւտմա մը որոնց պարունակութիւնը խորհրդաւոր հանգամանք մը կուտայ դէպքին: Նամակը որ միայն սկզբնատառերով ստորագրուած է, կ'իմացնէ Ռօպէրթի թէ Տրալֆու-Լաթէրհալի գաւին մէջ գործօն դեր կատարող հարցաքննիչ գաւառապետին մէկէն ինք (Ռօպէրթի) հարցաքննութեան պիտի հրաւիրուի և թէ պարտի գաւառապետին հարցումներուն բացարձակ լուծմամբ՝ միայն պատասխանել, որով միայն կ'ընայ ինքզինք ազատել: Այցեւտման ալ զրկուած է Բարիկիցի բռնիչէ մը որ նոյնպէս Ռօպէրթի կը յանձնարարէ լուծութիւն պահել հարցաքննիչ գաւառապետին հանդէպ և կ'իմացնէ թէ գրամը պատրաստ կը կ'ընայ Տանֆէր-Ռօլլը փողոցին մէջ:

Եթէ օստիկանութիւնը ուզէ այս ինքնասպանութեան տմէն յարակից հանգամանքները քննել և երեւան հանել, կը սպասուի՝ նոր և շատ կարեւոր յայտնութիւններու:

Հանրային յուզումի սիրահարներուն աչքը լսի:

Ի Խ Թ Ա Ր

Չիլիիկիր Էսնաֆընտան վէ էն ասըլ Ահեօլու—Պուրկազըլ միլլէթ տալլարըմըլտան Տ. Սարգիս Ս. փափաղեան՝ Օլթէիցիտա (Բուժմանիս) իդամէթ իթմէքտէ օլտընը պիւթիւն Պուլկարիտ տախիլինաէ պուլընան տգրապ վէ տօսթլարընա իթթար իտէր:

ԽՄԻԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

Իրաւունքի արտադրման գործակատարներէն և բաժանորդներէն կը խնդրուի առայժմ դրամ և ապաւնութեան հասցէին զրկել թերթիս պատասխանատուին սա հասցէով:

Բ. Մ. Տոնով 32 Բ. «Иривункъ» Варна.

Կամ՝

M. Mihan Sconian
pour la Rédaction du journal
„Irivounk“. — Varna.

Իսկ զԱՐԶ ՆԱՄԱԿԵՐ, լրագիր եւն. առաջաւոր պէս զրկել ուղղակի խմբագրութեան հասցէին, որ դրուած է լրագրին վրայ:

ՏՈՒԷԼԼՕ

Սերէվիւմըլը օգուլտար՝ Լվլլուանըն պիւր քէօշէսինտէ վուզու պուլմուշ օլան էհէմիլէթսի պիւր հատիսէտէն պահս իտէհէլիէլէ զահիպ օլապիլիլէր, լաքին մէսէլէ պիլզաթ պիլզիմ արամըլտա, հաթթա պուլմուշըլըն ալթընտա վուզու պուլմուշ արը:

Իչի պիւր գաշ սէօղ իլէ իլզահ իտէլիմ:

Վառնատա պուլընան իքի միւթէպէր վաթ արտսընտա հէր նաւըլ Լապ պիւր միւնաղաա զուհուր իտէր վէ պուլմուշտան պիւրի նաւաւընըն բայիմալ իտիլիլի միւլա հազտսըլլա, խասմինի տուէլլօ մէյտաննա չալըրըր: Թէքիթ տէրհալ գապուլ օլունուր վէ հէր իքի թարաֆտան շահիւլէր թային իտիլիլ: Հալ պուր իչին բէք ֆէնա նէթիհէլէրէ վարաճաղը աչիքիար պուլընաղընտան, պիւր չօգ միւլաքէրէլէրտէն, միւլահաւաւալտան սօնրա, իչի սուլհ թաւրիքիլլէ թէսվիլլէ իթմէք ճիհէթի տահա զիյատէ մուվաֆըղը մաս լահաթ կէօրիւլէրէք, շահիւլէր թարաֆտան մէսէլէլլէ խիթամ վէրիլիլ:

Շիմտի պիլ իչի պաշգաւ եօլտա մուհաքէմէ իթմէք իսթէրիլ:

Իկէր պուր կիպի ինթիլաթլաւա էհէմիլլէթ վէրիլլէլիլ տէ, պուլ տուէլլօ վուզու պուլմուշ օլսայլըլը, սիլահ գուլլանմագտա հանկը թարաֆ տահա զիյատէ մահիլ իսէ, զալիպիլլէթ օլթաւաթտա գալմայաճաղըլըլըլ Ֆիլվալը, պազը քէրրէ թէստուիլ ֆիւն տէ չօգ հիքմէթլէր վիւճուտէ կէթիլթիլ կէօրիւլլէլլօրստա, է'ն պիւլլէք գուլվէթիլլէ սիլահ գուլլանմագտաքի մէհաքէթտէ օլտըլընը քիմ պիլմէլ:

Հալ պէօլլէ իքէն, իքի խաթիմ տէն հազգսըլ օլան թարաֆ մէհաքէթիլլէ կիւվէնիլ տէ հազըլ օլան թարաֆը էօլտիլլէլլէ օլուրսա, տալլէթ վէ հազգաւիլլէթ նաւըլ եէրինի պուլմուշ օլուր: Մաղլուպիլլէթ քիմտէ գալըրսա, օ' հազգսըլ թուլթուլմուշ օլմայօր մը: Պու հալաէ տուէլլօտան տաւա մանէսարըլ, տահա չօճուզճա

պիր չէ՛ր թէսսավոր ուղունպիւ-
լի՛ր մի :

Թէէսսիւֆ իտէրիւք քի, պու-
հագըգաթ մէյտանտա իքէն,
տիւննանըն էն ղիյատէ մէտէնի
թանըլան միլլէթլէր արասընտա
հալէա պու առէթ ճարի պուլու-
նըյօր վէ է՛ն պիւլիւք հայսիյէթ
վէ մէվզը սահպլէրի նամուլա-
ընըն իյատէսի իչիւն, հալէա
պու վասըթայա միւրաճաթ ի-
տիյօրլար :

Պու պիր խաթա, հէմ աֆվ օ-
լունմալ պիր խաթա տըր : Պիր
քիմէն աղաճըգ գուվլէի մուհա-
քէմէյէ մալիք օլտա, տէրհալ ան-
լայապիլիք քի պու վասըթա իլէ
նէ՛ ինթիգամ ալընպիլիք վէ նէ՛
տէ հագգանիյէթէ խըտմէթ ի-
տիւմիլ օլուր :

Հագգընը հագգ իթմէք իսթէ-
յէնլէր տօղրուտան տօղրույա մահ-
քէմէ հուզուրընա չըգմալը տըրլար
քի, առալէթ վէ հագգանիյէթ
հանկը թարաֆտա օլտըղը մէյտա-
նա չըգսըն . եօգսա էօյլէ տուէլլօ
կիպի չօճուգճա շէյլէրլէ օղրաշան-
լար նազարըմըլտա հիչ պիր
վագըթ հագգ գաղանամաղլար :

Տ Ա Ւ Ի Լ Ի Յ Է

Սոն հավատիւրէն նազարէն,
Բրէնա հաղրէթլէրինին վալիտէսի
բրէնէս Կլէմանթինին ահվալը
սըհհիյէսի կիթտիքճէ էյիլէշմէյէ
հիւզ թութմագտա օլտըղը մաէլ
մէմնունիյէ անլաշըմըլ տըր :

Բրէնա հաղրէթլէրի՛ վալիտէսի-
նին խասթալըղը էսնասընտա
Աւսթրիա իմբէրաթօրընըն կէօ-
թէրտիյի հիւնիւ թէվէճճիւհտէն
տօլայը պէյանը թէշէքքիւր իթ-
մէք իւզրէ, սարայը իմբէրաթօ-
րիյէ կիթմիլ վէ վուգու պուլան
միւլագաթ եարըմ սաաթ գատար
տէվամ իթմիլ տիր :

Աւսթրիա իարիճիյէ նազըրը
Մ. Կոլախովսքի տախի Բրէնա
հաղրէթլէրինին ղիյարէթինէ մու-
գապլէն էյլէմիլ տիր :

Պուլկարիանըն միլլէթ մէճի-
սինտէ գապուլ օլունան եէնի պիր
նիզամնամէ ահքեամընճա, պուն-
տան պէօյլէ եալընըգ էվրօքա
տար իւլ ֆիւնուլարընտա իքմալը
թահսիլ իտէն վէ ֆագաթ Պուլ-
կարիանըն վէ եա տիկէր պիր մա-
հալին ժիմնաղընտան շահատէթ-
նամէսի օլան քիմսէլէր Պուլկարիա
տախիլինտէ սանաաթլարընը իճ
րայա մէհզուն օլաճագլար տըր.
պէօյլէ պիր շահատէթնամէյի հա-
յիղ օլմայանլար՝ իւշ սէնէ զար-
ֆընտա պիր ժիմնաղտա թէտրիս
օլունան իւլում վէ ֆիւնուն իւզէ-
րինէ իմթիհան վէրմէյէ մէճպուր
օլաճագլար տըր :

Վառնա ուրբալիթէլի պիր թահ.

րիրաթը մախսուսէ նէշիլլէ,
րուխսաթ ալմագսըղըն վէ իսիմ-
լէրինի գայտ իթտիւրմէքսիյին
հէքիմիք, պալթալըգ վէ աիշճի-
լիք սանաաթլարընը իճրա իտէն-
լէրին եիւմի կիւն զարֆընտա ի-
սիմլէրինի գայտ իթտիւրմէլէրինի
վէ պու միւտտէթ խիթամընտա
մէսուլ թութուլաճագլարընը իւն
վէ իսթար իթմիլ տիր :

Փետրուարըն օն տօղրուլընճը
կիւնիւ Պուլկարիանըն սէրպլէթ-
լիք գաղանմասընըն եէվմը մախ-
սուսը օլմագ միւնասէպլէթիլլէ,
վիտինտէ պուլունան Մալիգոն-
եալըլար Բուսիա իմբէրաթօրըլա
գօնթ իննաթիւվէ շիւքրանիյէթի
հալի պիր թէլէկրաֆ շէքմիլլէր
տիր :

Սոն հավատիւրէն կէօրէ, էօ-
նիւմիւլտէրի իւք պէհարտա Պուլ-
կարիա իլէ Սրպիա արասընտա
պիր մուհարէպէ վուհուր իտէճէք
օլուրսա, արանսըղա կէլմէմէք ի-
չիւն, Թիւրք հիւքիւմէթի շիւ-
տիտէն Մալիգոնիտա պիր չօգ
ասքէր թօրլամաղա պաշլամըլ
տըր : Քէզալիք պիւլիւք տէվլէթ-
լէրէ կէօնտէրտիյի պիր թահրի-
րաթը մախսուսէ իլէ, Մալիգո-
նիտա թիւրքլէր թարաֆընտան
վուգու պուլմըլ օլտըղը Պուլկա-
րիանըն վէրտիյի պիր լայիհատա
ղիք օլունան վահիլիքլէրին թէ-
մամըլա եալան օլտըղընը պիւ-
տիւմիլ տիր :

Փետրուարըն 16ընճը կիւնիւ
սաաթ 10 րատտէլէրինտէ վի-
տինտէ զարիպ պիր ալէամէթ կէօ-
րիւմիլ տիր : Հապա զայէթ
պուլուլթուլ օլտըղընտան, պիր-
տէն պիրէ կէօքտէ պիր շէյ բար-
լամըլ վէ պիւլիւն վիտին գա-
սապասըլա ճիւլարընը էլէքթրիգ
ըլըղը կիպի թէնվիւր իթմիլ տիր.
պու ըլըգ իքիւլ սանիյէ գա-
տար տէվամ իթտիքտէն սօնրա,
տէհշէթլի պիր կէօք կիւրլէմէսի
իշիտիլմիլ տիր :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Կիմանանք թէ յառաջիկայ ե-
րեքշաբթի երիկուն վէսէյօ խուժ-
բը ի նպատտ հանրօգուտ ձեռ-
նարկի մը Գաթէրիկ հովարոթ թա-
տերախաղը պիտի ներկայացնէ
Անկէլ Սլավօֆի սրահին մէջ : Փա-
վագիլի է որ հասարակութիւնը
փութայ իր ներկայութեամբ խը-
րախուսել խուժբը, որ՝ զօհօղու-
թիւն խնայած չէ հանգիստական-
ները ամէն կերպով գոհացնելու
համար :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Սլոանպօլտա նէշիլ օլունան Նօ-
վիկի նամ պուլկար կաղէթասընըն
մուհարըրիւր վէ էկպարքհանէ
պաշ քիաթիպի Մ. Մաքէտոնսքի
իւզէրինէ սուի գաստ վուգու
պուլմուլ տըր, շէօյլէքի, մէճհուլ
պիր շախ կաղէթա խտարէխանէ-
սինէ կիտէրէք, պաղը հալատիպէ-
րին նէշի խտիլմէմէսինին սէպէպի-
նի սիւվալ իթմիլ օլտըղընտան,
Մ. Մաքէտոնսքի տախի ալաղա
գաղըպ քիաղըլարը գարըլտըր-
մաղա մէշղուլ պուլընտըղը սըրա-
տա, մէճհուլ շախ րէվիլլէր իլէ
մէրգոմը գաթլ էյլէմիլ տիր :
Պու իշին պաղը բօլիթիգա սէ-
պէպլէրինտէն իլէրի կէլմիլ օլտը-
ղը վանն օլընմագտա տըր : Զապ-
թիյէ նէզարէթի ճանիլի արաթ-
տըրմագտա օլտըղընտան, էլլի
գատար շիւպհէլի էշխաս թէվգիֆ
օլունմուլ տըր :

Սուլթան Բուսիանըն Սլոան-
պօլ էյլիսի Մ. Զէնօվիէվէ պիր
զըլթա մուրաասա Օսմանիյէ նիշա-
նը իհտա էյլէմիլ տիր :

Եունան գրալը հաղրէթլէրինին
վուգու պուլան սուի գաստտան
գուրթուլմըլ օլտըղընա տարի պիր
սէվինճ ալէամէթի օլմագ իւզրէ,
Եունանիւթան էհալիսինին արգու-
սըլա գաղանըն վուգու պուլտըղը
մահալաէ պիր իպատէթիւսանէ եսր-
մաղա գարար վէրիլմիլ տիր :

Եունանիւթան մալիյէ նէզարէ-
թի թարաֆընտան մէպուսան մէճ-
լիսինէ թագաթի՛ իտիլէն գօնթրօլ
բրօկրամը թէմամըլա գապուլ ի-
տիլմիլ օլտըղընտան, գրալ տախի
մէշքիւր բրօկրամը անիտէ թաս-
տիգ իտէճէք իմիլ :

Թիւրք հիւքիւմէթիինին ախիլէն
Ալմանիայա քիւլիյէթլի Մալիգէր
ֆիշէնկէրի սըբարըլ իթմիլ օլ-
տըղընը Սլոանպօլ թիւրք կաղէ-
թալարըն պաղըլարը խապէր վէ-
րիյօրլար :

Թանըն Պէլկրատտան ալտըղը
պիր թէլէկրաֆա կէօրէ, Սըրպ
հիւքիւմէթի Մալիգոնիա մէսէլէ-
սինտէն տօլայը Եունանիւթան իլէ
պիր իթթիֆագ հուսուլէ կէթիւր-
մէք իչիւն՝ շու կիւնլէրտէ պէօ-
լիւք զայլէթ վէ Աթինտ հիւքիւ-
մէթի իլէ սըզը մուխապէրաթտա
պուլունըյօր :

Իւքիւլպտէ իւշ սըրպ մէքլմէպ
թալէպէլէր պիր գօնտուրաճը պուլ-
կարը խանշէր իլէ գաթլ իթմիլ-
լէր տիր : Գաթլիլլէր զապլիյէ
թարաֆընտան թէվզըֆ օլուն-
տուլար :

ԶԱԽԻՐԻ ԲԻՍՏԱՍԸ

Վառնա 27 փետրուար
Պուլկարիա
Վալօն, լիպրա 47-51, հէքթօլ.
8.10-8.60 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ.
8.50-11 ֆրանք
Սրա
Լիպրա 38-41, հէքթօլ. 4.20- 4.40
ֆրանք

Միւրք
Վալօն, լիպրա 57-58 հէքթօլ.
5.50-5.70 ֆրանք
Արապա, լիպրա 57-61 հէքթօլ.
5.80-6 ֆրանք

Ֆառաշխա
100 օգգաւը 19-24 ֆրանք՝ մալա
կէօրէ
Արապա մուամէլէսի՛ Նարօլէոն
21 ֆո. հիսապը իլէ տիր :
Կիւնտէ 2-3 վալօն վէ 5-6
արապա պուլտալ, 3-5 արապա
արապա, 4-5 վալօն վէ 8-10
արապա մըսըր կէլմէքտէ տիր :

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանի հայ գաղութի
մասին պատմական և ազգագրա-
կան խիստ շահեկան տեղեկու-
թիւններ պարունակող սոյն անգ-
լիէրէն երկասիրութիւնը, զոր հե-
ղինակը, Տիար Մեսրոպ Սէթ-
եանց՝ կալկաթայէն զրկած է մեզ,
կարծէ որ ամէն անգլիագէտ ազ-
գայիններու թանգարանին մէջ
գտնուի :

Գինն է 6 լէվ
Կեդրոնատեղի Վառնա
Ս. Զարպիսանկեան
«Հայկական Գրատուն»

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուլկարիէն սորվիլ փափագող-
ները՝ առաջնորդ ունենալով իրենց
սոյն քերականութիւն՝ կրնան վեց
ամսուան մէջ կարգալ գրել և խօ-
սիլ : Կը ծախուի ֆ. Պօլիս, թըղ-
թալմաճառ թագաւոր Գ. Հինտլեանի
մօտ :

Գինն է՝ ընտիր կաղմ, հրահանգ-
ներու բանալին մէկտեղ, 6 լէվ.
Թղթակաղմ, առանց բանալիի 4 լէվ.
առանձին բանալին 60 սանթիմ :

Մեծաքանակ գնողներուն մաս-
նաւոր զեղչ կըլլայ :

Կը ծախուի Նաե ի Վառնա
գրապաճառ Տ. Զարպիսանկեանի
մօտ :

Տ Ա Ր Ե Յ Ո Յ Ց

Հրատարակուեցաւ հայ-Ռուսման-
րէն տարեցոյցն ի Կալապ. ձեռամբ Տ.
Ղեւոնդ քահանայ Փափագեանի : Կը
պարունակէ Ա. Ժամանակագրութիւն
երեւելի անցից աշխարհի. Բ. համա-
ռօտ գիտելիք ի վերայ տոմարին հայոց
Գ. ոտանաւոր մը՝ Զգայուն հոգին.
Դ. բուն օրացոյցը. Ե. յաւելուած մը
որ կը բաղկանայ «ոգին արաքիլի»
վերնագրով եղերեքուլթիւնէ մը, եր-
կու ոտանաւորներէ ու բարոյալից ա-
սացուածներէ :

Գին 1 ֆրանգ, կը ծախուի Վառնա
գրապաճառ Ա. Զարպիսանկեանի քով :
Տ. Ղեւոնդ քահանայ հրատարակած
է նաեւ իր նախորդ տարուան օրա-
ցոյցին յաւելուածը որ կը ծախուի 50
սանթիմի :